ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿԱՊԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՀԿԾ-24/1

ք. Երևան «27» 06 2024թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար՝ **Կ. Մարգարյանի**, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրեն **Հ. Ֆարամազյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ինտերնետ հասանելիության, հեռախոսային կապի և տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ստանալ սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալ առաջարկվող Ծառայությունների, կիրառվող Սակագնային պլանների/փաթեթների, մատուցված և մատուցվող Ծառայությունների տեսակի, ծավալի, արժեքի, գանձված գումարների և Անձնական հաշվի ընթացիկ մնացորդի մասին:

2.1.2. Կատարողի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխել իրեն մատուցվող Ծառայությունների ցանկը և Սակագնային պլանները/փաթեթները:

2.1.3. Կատարողի կողմից սահմանված կարգին համապատասխան ստանալ իրեն մատուցված Ծառայությունների վերծանումները: Ընդ որում Ֆիքսված հեռախոսակապի մուտքային զանգերի վերծանումը Պատվիրատուն կարող է ստանալ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.1.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Կատարողի կողմից սահմանված կանոններով նախատեսված դեպքերում և Տեխնիկական հնարավորության սահմաններում հրաժարվել Կատարողի կողմից Ցանցի միջոցով տարածվող զովազդային և/կամ տեղեկատվական հաղորդագրությունների ստացման հնարավորությունից:

2.1.5. 30 օր առաջ գրավոր տեղեկացնելով Կատարողին՝ միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրից՝ վճարելով մինչև Պայմանագրի լուծման օրն իրեն մատուցված Ծառայությունների համար:

2.1.6. Առանց հավելյալ վճարի (տույժ, տուգանք կամ հրաժարագին) միակողմանի դադարեցնել Պայմանագրի գործողությունը՝ նախքան Պայմանագրում նախատեսվող Պատվիրատուի իրավական վիճակը վատթարացնող փոփոխությունները, լրացումներն ուժի մեջ մտնելը, բացառությամբ, եթե այդ փոփոխությունները, լրացումները պայմանավորված են ՀՀ օրենսդրության պահանջներով:

2.1.7 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.8 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.9 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) պարբերաբար՝ մեկ ամսվա ընթացքում 2-ից ավել անգամ, ծառայության պատշաճ մատուցումը չի իրականացվել,

գ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայությունը /արդյունքը/, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին օգտագործման և սույն պայմանագրով նախատեսված դեպքում սեփականության իրավունքով տրամադրել Սարքը իր պատկանելիքներով և մալուխը /ցանկը սահմանվում է **Հավելված 1.1/**, որոնց միջոցով Պատվիրատուն հնարավորություն է ստանում օգտվել Կատարողի Ծառայություններից:

2.4.2 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.3. Ծառայություններից օգտվելու նպատակով հատկացնել Պատվիրատուին Սարքը և կատարել համապատասխան ցանցային միացումներ:

2.4.4. Սահմանված կարգով Պատվիրատուին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն՝ Կատարողի ցանցի հասանելիության, Տեխնիկական հնարավորությունների, Պատվիրատուի կողմից ընտրված Սակագնային պլանով/փաթեթով նախատեսված Ծառայությունների առանձնահատկությունների, հատկանիշների, Ծառայությունների մատուցման պայմանների, մատուցված Ծառայությունների ծավալի և Անձնական հաշվի մնացորդի մասին:

2.4.5. Տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել Ծառայություններից օգտվելու Պատվիրատուի հնարավորությունը:

2.4.6. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն իր կողմից մատուցվող Ծառայությունների պատշաճ որակն ապահովելու համար:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցումը պահանջում է Պատվիրատուի տարածքում Սարքի տեղադրում: Սույն Պայմանների պահանջները բավարարելու դեպքում Պատվիրատուի պահանջով Կատարողը պարտավոր է Պատվիրատուի տարածքում տեղադրել համապատասխան Սարքը և միացնել Ցանցին:

3.2. Եթե Պատվիրատուն ունի Կատարողի պահանջներին համապատասխանող սարք, որով ըստ Կատարողի մասնագետների հնարավոր կլինի օգտվել Կատարողի կողմից մատուցվող Ծառայություններից, ապա Պատվիրատուի ցանկությամբ, Տեխնիկական հնարավորությունների առկայության և սույն Պայմանների պահանջները բավարարելու դեպքում Կատարողը պարտավոր է համապատասխան ցանցային միացումները ապահովելով միացնել Պատվիրատուի սարքը Ցանցին:

3.3. Պատվիրատուն իրավունք ունի Կատարողի կողմից սահմանված կարգով փոփոխելու նախընտրած Ծառայությունների ցանկը, Սակագնային պլանները/փաթեթները (բացառությամբ Կատարողի Պաշտոնական վեբ կայքում զետեղված Ծառայությունների մատուցման այլ պայմաններով սահմանված դեպքերի)՝ ներկայացնելով համապատասխան դիմումը և Պահանջվող փաստաթղթերը, պայմանով, որ այդպիսի պահանջ ներկայացնելու պահին Պատվիրատուն Կատարողի նկատմամբ չի ունենա չմարված պարտք:

3.4. Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունը մատուցելու նպատակով ֆիքսված հեռախոսակապի ցանցում Պատվիրատուին նույնականացնելու համար Կատարողը իր համարային ռեսուրսներից տրամադրում է Բաժանորդին Հեռախոսահամար:

3.5. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.6. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.7. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.8 Եթե պայմանագրի 3.7 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.7 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.9. Այն դեպքում, երբ Ծառայությունների մատուցման նպատակով Սարքը տրամադրվում է Պատվիրատուին Կատարողի կողմից, առաջին 3/երեք/ տարվա ընթացքում Սարքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Կատարողին, իսկ Պատվիրատուն ձեռք է բերում Սարքի օգտագործման իրավունք: Պատվիրատուն իրավունք չունի Սարքը կամ դրա նկատմամբ օգտագործման իրավունքը փոխանցել երրորդ անձանց: Պատվիրատուն պարտավոր է Սարքն օգտագործել միայն Պայմաններով սահմանված նպատակներին ու կարգին համապատասխան: Սարքը և դրա տեղադրման համար նախատեսված մալուխը, ինչպես նաև այլ տեխնիկական միջոցները Պատվիրատուին են հանձնվում հանձնման-ընդունման ակտով, իսկ Պայմանագրի գործողության առաջին 3/երեք/ տարին լրանալուց հետո, Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրոց սահմանված վճարման պարտավորությունների բացակայության պարագայում, Սարքը իր պատկանելիքներով և դրա տեղադրման համար նախատեսված մալուխը անհատույց դառնում են Պատվիրատուի սեփականությունը:

3.10. Պատվիրատուն պարտավոր է ապահովել Սարքի պահպանությունը, ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները, Սարքն օգտագործել Կատարողի, արտադրողի կողմից և այլ կերպ Սարքին ներկայացվող պահանջներին և շահագործման կանոններին համապատասխան:

3.11. Սարքի տեղադրումը, կարգաբերումը և տեղափոխումը /մատուցվող Ծառայությունների հասցեափոխության դեպքում/ իրականացվում է միայն Կատարողի մասնագետների կողմից:

3.12. Պատվիրատուն պարտավոր է Սարքը օգտագործել միայն այն վայրում, որտեղ այն տեղադրվել և կարգաբերվել է Կատարողի մասնագետների կողմից՝ միայն Կատարողի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով: Կատարողի գրավոր համաձայնությամբ՝ Պատվիրատուն իրավունք ունի Սարքը ապամոնտաժել և տեղափոխել/տեղաշարժել Կատարողի հետ համաձայնեցված վայր:

3.13. Պայմանագրի գործողության առաջին 3/երեք/ տարվա ընթացքում սույն Պայմանագրի ցանկացած հիմքով դադարեցման (լուծման) դեպքում կամ որոշակի Ծառայություն(ներ)ի մատուցումը դադարեցնելու դեպքում, որոնց մատուցումն ապահովվում էր Սարքի միջոցով Պատվիրատուն պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստեղծել պայմաններ Կատարողի մասնագետների համար Սարքը, Սարքի պատկանելիքները ապամոնտաժելու և Սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը) այն Կատարողին հանձնելու համար: Սարքի, Սարքի պատկանելիքների վնասման, կորստի դեպքում Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել տվյալ Սարքի, Սարքի պատկանելիքների արժեքն ամբողջությամբ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **ընդհանուր գինը կազմում է 255 000 000 (երկու հարյուր հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Պայմանագիրը կնքվում է 5 /հինգ/ տարի ժամկետով:** Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13. Կատարողը Պատվիրատուի անհատական տվյալները, նրանց կողմից օգտագործվող Ծառայությունների տեսակի, արժեքի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի համարվող

տեղեկությունները գաղտնի է պահում՝ բացառությամբ Պայմաններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Աբովյան, Խաղաղության 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1930011980040100
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 00096001
ՀՎՀՀ 02631263	էլ.հասցեն՝ b2b@ovio.am
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան	հեռ.՝ 060 469937
----------	Գլխավոր տնօրեն՝ Հ. Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ	----------
	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«27» 06 2024թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՀԿԾ-24/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	32411130/2	***Ինտերնետ հասանելիության ծառայություն*** Օպերատորը պետք է • տրամադրի 1000 Մբիթ/վրկ երաշխավորված արագությամբ (CIR), սիմետրիկ, ինտերնետ հասանելիություն 1 կետի համար, որը գտնվում է Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում և միջինացված 40 մբ/վ՝ մյուս 56 հասցեներից յուրաքանչյուրի համար /Հավելված 1/: • Ապահովի պահուստային կապուղիներ ՀՀ Քննչական կոմիտեի բոլոր հասցեներում 10 մբ/վ թողունակությամբ: • Տրամադրի պահանջվող քանակով իրական ip հասցեներ: • Ծառայությունը տրամադրի օպտիկամանրաթելային կապուղու միջոցով և ապահովի ինտերնետ միջավայրում տվյալների փոխանցման անվտանգությունը և գաղտնիությունը: • Իրականացնի մատուցվող ծառայության վերահսկումը և ապահովել ծառայության մատուցման անընդհատությունը և տեխնիկական սպասարկումը (24/7): • Տրամադրի իրական ժամանակում ինտերնետ կապի առկայության, որակի ստուգման մոնիթորինգի հնարավորություն: • Ապահովի անհրաժեշտ կոմունիկացիաներ և սարքեր իր հաշվին, իրականացնի դրանց կարգաբերումը, տեղակայումը և սպասարկումը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կարող է պահանջել մինչև 5 հասցեի ավելացում /կամ պակասեցում/ և 5 հասցեի տեղափոխում, որի դեպքում ծառայության ամսավճարը չի փոխվի: Պատվիրատուն կարող է պահանջել Օպերատորից գումարային թողունակության մինչև 300 մբ/վ ավելացում, ինչպես նաև թողունակության վերաբաշխում կետերի միջև: Օպերատորի գործունեությունը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքդրությանը և ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1069-Ն որոշման դրույթներին:	դրամ	**45 000 000** / մեկ տարվա գումար - 9 000 000 /	1	Համաձայն Հավելված 1-ի	1-ին տարի՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 30.12.2024թ. 2-րդ տարի՝ 2025 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2025թ. 3-րդ տարի 2026 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2026թ. 4-րդ տարի՝ 2027 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2027թ. 5-րդ տարի՝ 2028 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2028թ. 2029 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.06.2029թ.
2	64211100/4	***Հեռախոսային կապի ծառայություն*** • Հեռախոսային կապը պետք է տրամադրել Հավելված 1-ում նշված հասցեներում, ներքին և ելքային հեռախոսահամարների քանակով: • Ներքին հեռախոսահամարները կարող են լինել մինչև 1 265 հատ, իսկ ելքային հեռախոսահամարները՝ 400: Նշված հեռախոսահամարների քանակը կարող են ավելանալ և պակասել պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա:	դրամ	140 000 000 / մեկ տարվա գումար - 28 000 000 /	1	Համաձայն Հավելված 1-ի	1-ին տարի՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 30.12.2024թ. 2-րդ տարի՝ 2025 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց

		• ՀՀ ՔԿ ներգերատեսչական հեռախոսային ներքին ցանցում /57 հասցեներում/, հեռախոսազանգերը պետք է լինեն անվճար: • Ծառայության մատուցման հաջորդ ամսում կատարողը ՀՀ ՔԿ լիազորված անձին պետք է տրամադրի հաշվի մանրամասն վերծանումը: • Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը հաշվարկվում է ծառայությունների ակտիվացման պահից: • Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը հաշվարկվում է ըստ ամիսների: • Օպերատորը պետք է տրամադրի անհրաժեշտ քանակի VoIP հեռախոսներ/մինչև 1200 հատ/, Video հեռախոսներ /մինչև 65 հատ/, VoIP սերվեր իր հաշվին, իրականացնի դրանց կարգաբերումը, տեղակայումը և սպասարկումը:					նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2025թ. 3-րդ տարի 2026 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2026թ. 4-րդ տարի՝ 2027 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2027թ. 5-րդ տարի՝ 2028 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2028թ. 2029 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.06.2029թ.
3	72311240/2	***Տվյալների փոխանցման ծառայություններ*** **ՀՀ քննչական կոմիտեի Համակարգչային լոկալ ցանցերի ձևավորում** • ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի համակցում ՀՀ Ոստիկանության գերատեսչական ցանցի հետ; • ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի միացման կազմակերպում այլ գերատեսչությունների հետ; • անհրաժեշտ սարքավորումների տեղակայում դրանց կարգաբերում և սպասարկում ; • 24/7 տեխնիկական աջակցություն; • անվտանգության մեխանիզմների կիրառում	դրամ	**70 000 000** / մեկ տարվա գումար - 14 000 000 /	1	Համաձայն Հավելված 1-ի	1-ին տարի՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 30.12.2024թ. 2-րդ տարի՝ 2025 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2025թ. 3-րդ տարի 2026 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2026թ. 4-րդ տարի՝ 2027 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2027թ. 5-րդ տարի՝ 2028 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2028թ.

							2029 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.06.2029թ.

Հավելված 1

Ծառայության մատուցման հասցեներ
Հեռախոսային, ինտերնետ կապի, տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում:
1. ք.Երևան "Զվարթնոց" օ/կ
2. ք.Երևան Ազատության 26 (Պ.Սևակի 4)
3. ք.Երևան Բաբայան 4
4. ք.Երևան Կոմիտասի 51Ա
5. ք.Երևան, Ահարոնյան փ.թիվ 3
6. ք.Երևան, Բորյան փ.թիվ 1
7. ք.Երևան, Մամիկոնյանց 46/5
8. ք.Երևան, Մամիկոնյանց 48/1
9. ք.Երևան, Մամիկոնյանց 39 ա
10. ք.Երևան, Խանջյան 43ա /
11. ք.Երևան, Ա.Սարգսյան փ.թիվ 22
12. ք.Երևան, Գ.Նժդեհի փ.թիվ 27
13. ք.Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 9
14. ք.Երևան, Մ.Խորենացու փ.թիվ 162
15. ք.Երևան, Մազմանյան 3
16. ք.Երևան,Վրացյան փ.թիվ 90
17. ք.Երևան, Դեղատան 3
18. Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու 4
19. Արագածոտնի մարզ ք.Ապարան,Գայի փ.թիվ9
20. Արագածոտնի մարզ ք.Թալին,Գորկու փ.թիվ 14
21. Արարատի մարզ ք.Արտաշատ, Մարքսի 15ա
22. Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ 4
23. Արարատի մարզ ք. ք.Վեդի, Թումանյան 3
24. Արարատի մարզ ք.Վեդի, Արարատյան 55
25. Արմավիրի մարզ ք.Արմավիր, Չարենցի 24
26. Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մաշտոցի փ.թիվ 81
27. Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Բունյաթյան փ. 1-ին անցում N 2
28. Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի,Գ. Նժդեհի 3 փ.թիվ 5
29. Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Դեմիրճյան փ.թիվ 8
30. Գեղարքունիքի մարզ ք.Վարդենիս, Վ.Համբարձումյան /Բարեկամության/ 47
31. Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Նաիրյան 189
32. Լոռու մարզ ք.Ալավերդի,Թումանյան փ.թիվ 3
33. Լոռու մարզ ք.Սպիտակ,Ալեք Մանուկյան փ.թիվ 1ա
34. Լոռու մարզ ք.Ստեփանավան, Արևելյան 4

35. Լոռու մարզ, ք.Վանաձոր, Ամիրյան 10
36. Լոռու մարզ ք.Տաշիր, Պուշկինի փ.թիվ 100
37. Լոռու մարզ, ք.Վանաձոր, Զորավար Անդրանիկի 12
38. Կոտայքի մարզ ք.Հրազդան, Կենտրոն թաղ. 52/2
39. Կոտայքի մարզ ք.Եղվարդ,Շիրակի փ.թիվ 2
40. Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Զ. Անդրանիկի փ.թիվ 5
41. Կոտայքի մարզ ք.Չարենցավան, Աբովյան 8
42. Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի փ. թիվ 68/1
43. Շիրակի մարզ ք.Արթիկ,Բաղրամյան 4
44. Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի փ. թիվ 19/Ա
45. Սյունիքի մարզ ք.Կապան, Երկաթուղայինների 4.
46. Սյունիքի մարզ, ք. Գորիս, Նարեկացու փ.թիվ 3
47. Սյունիքի մարզ, Մեղրիի համայք, ք. Ագարակ, Գարեգին Նժդեհ 2
48. Սյունիքի մարզ ք.Մեղրի, Զ.Անդրանիկի փ.թիվ 10
49. Սյունիքի մարզ ք.Սիսիան, Գ. Նժդեհի փ. թիվ 6
50. Սյունիքի մարզ ք.Սիսիան, Սիսակյան փ. 23Ա
51. Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Միկոյան փ. թիվ 18
52. Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Թամանցիների 45/1
53. Տավուշի մարզ ք.Իջևան, Մելիքբեկյան 3
54. Տավուշի մարզ ք.Դիլիջան, Մյասնիկյան փ.թիվ 57
55. Տավուշի մարզ ք.Բերդ, Լևոն-Բեկի փ.թիվ 12
56. Տավուշի մարզ ք.Նոյեմբերյան, Զ. Անդրանիկի 3
57. Տավուշի մարզ, Գ. Գետահովիտ, 1-ին փ. 3-րդ շենք

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001
Էլ.հասցեն՝ b2b@ovio.am
հեռ.՝ 060 459937
Գլխավոր տնօրեն՝ Հ.Խաչատուրյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1.1
«27» 06 2024թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՀԿԾ-24/1» ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ
ՍԱՐՔԵՐԻ /ԻՐ ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐԻ/

Հ/Հ	Անվանումները	Չափման միավոր	Քանակը	Միավորի գին /ՀՀ դրամ/ներ ԱԱՀ
1	Հեռախոս IP Grandstream GXP1625, Small-Medium Business HD IP Phone	հատ	1200	21 648
2	Կոնֆերանս համակարգ Grandstream IP GXV3350 , IP Multimedia Video Phone, 5" capasitive touch screen color LCD (1280x720), 1 M CMOS camera,Dual 100M/1000M	հատ	65	132 840
3	Ընդլայնման մոդուլ Expansion Module GBX20	հատ	5	54 120
4	VoIP server	հատ	1	805 000

***** *2027թ.-ի հուլիսի 01-ից Կատարողը ընդունման-հանձման ակտով Պատվիրատուին սեփականության իրավունքով կտրամադրի Սարքերը իր պատկանելիքներով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001
էլ.հասցեն՝ b2b@ovio.am
հեռ.՝ 060 469937
Գլխավոր տնօրեն՝ Հ. Ֆերդինանդյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«27» 06 2024թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՀԿԾ-24/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՍԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32411130/2	Ինտերնետ հասանելիության ծառայության	-	-	-	-	-	-	750 000	1 500 000	2 250 000	3 000 000	3 750 000	4 500 000	4 500 000
2	64211100/4	հեռախոսային կապի ծառայության	-	-	-	-	-	-	2 333 333	4 667 000	7 000 000	9 333 333	11 667 000	14 000 000	14 000 000
3	72311240/2	տվյալների փոխանցման ծառայություններ	-	-	-	-	-	-	1 167 000	2 334 000	3 501 000	4 668 000	5 835 000	7 000 000	7 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
***** 2025-2029թթ.-ին վճարումները կիրականացվեն յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001
էլ.հասցեն՝ b2b@ovio.am
հեռ.՝ 060 469937
Գլխավոր տնօրենը Հ. Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«27» 06 2024թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՀԿԾ-24/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» 06 2024թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՀԿԾ-24/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն